ՀԱՅՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՀԱՅ ԴԱՏԻ ԼՈՒԾՄԱՆ ԲՆԱԿԱՆ ԿԵՆՍԱԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ

Ս. Ռ. ՇԱՀԱԶԻԶՅԱՆ

Ազգերի, պետությունների, քաղաքակրթության, բնապատմական զարգացման (էվոլյուցիայի) ելևէջային գործընթացում մշտապես առկա է տարածքի համար մղվող պայքարը՝ դրսևորման իր բոլոր, շարունակաբար զարգացող ձևերով։

Երևի թե հանրության տարրերի՝ անհատների, ինչպես և պարզից դեպի բարդ հասարակական բոլոր կառույցների՝ տոհմ՝, ցեղի, ցեղախմբի, ընտանիքի, ժողովրդի, ազգի համար էլ տարածքը՝ իր ընդգրկուն առումով, որպես առարկայական սեփականություն վերջինիս դրսևորման ամենահին, կենսաանհրաժեշտ ձևերից մեկն է։

Եվ պատահական չէ, որ «հայրենիք» բառը «հայր» բառարմատով հայերենում մեկնաբանվում է որպես ցեղի կամ ազգի նախնահոր տարածքային սեփականություն. Հայկ նահապետի՝ Հայ Ազգի նախահոր երկիր։ Հայրենիք հասկացողությունը հին և միջնադարյան Հայաստանում ընկալվել է որպես ազգի ժառանգական սեփականություն հանդիսացող հողատիրություն, իսկ հետագայում նրա ծննդյան, ձևավորման և կայացման տարածք։ Պատմական այս զարգացումով է պայմանավորված «հայրենիքի» ներկայիս գիտական հանրագիտարանային սահմանումը. պատմականորեն տվյալ ժողովրդին, ազգին պատկանող բնատարածք՝ իր բնույթամբ, բնակչությամբ, հասարակական և պետական կառուցվածքով, լեզվով, մշակույթով, կենցաղով, բարքերով։

Հենվելով կենսատեղեկատվական դաշտի վարկածային մեր տարբերակին, նրա ֆիզիկական էությանը, կառուցվածքային, ինչպես և կենսաֆիզիկական, կենսաբանական և հասարակական դրսևորումներին և դրանցով պայմանավորված երևույթներին, կարգավորվող օրենքներին և օրինաչափություններին, ի լրումն հայտնի մոտեցումների, կփորձենք այլ տեսանկյունից դիտարկել ազգերի և անհատների կողմից իրենց ազգային պատմական տարածքների՝ հայրենիքի, դրա պահպանության, այն վերադտնելու համար մղվող շարունակական պայքարի գործընթացի բնական՝ կենսաֆիզիկական, կենսաբանական հիմքերը։

Երկրագնդի վրա ազգերի տարածական բնական ամրագրվածությունը. բնապատմական կենսատարածք, հայրենիք։ *Բնագիտության հիմնարար սկզբունքներից է Ամենափոքր գործողության սկզբունքը, ըստ որի, նյութական մարմնի գործողությունն ընթանում է էներգիայի նվազագույն ծախսերի, ամենակարճ ճանապարհի անցման սկզբունքով, իսկ փոխհարաբերությունների արդյունքում համակարգը ձգտում է կայուն հավասարակշռվածության վիճակի հասնելուն։*

Եթե այս սկզբունքի տեսանկյունից նայենք երկրագնդի վրա կենդանական աշխարհի, ինչպես և մարդկային հանրության բաշխվածության բնապատմական զարգացմանը, ապա շուտով կհանգենք հակասության՝ մեր տեսական դատողությունների և անցյալի ու ներկայի առկա իրականության անհամապատասխանությանը։

Ըստ ամենափոքր գործողության սկզբունքի, անկախ նրանից, թե որտեղ է ստեղծվել, ձևավորվել կենդանական աշխարհի տվյալ տեսակը, այն իր բնապատմական զարգացման ընթացքում պետք է որ ձգտի բնակլիմա-

յական ամենաբարենպաստ գոտում հաստատվելուն և ամրանալուն։ Նույնը կարելի է ասել և մարդկային հանրության մասին. այսինքն անկախ տվյալ աղգի՝ մարդկային հանրության կենսաբանական տվյալ տեսակի ձևավորման տարածական բաշխվածությանը, ամեն մի ազգ իր բնապատմական զարգացման ընթացքում, փորձի և սխալի մեթոդով պետք է վերատեղավորվեր, բնակլիմայական առումով, երկրագնդի առավել բարենպաստ գոտում՝ հասարակածի շրջակայքում, որն ի դեպ, չի նկատվել թե շատ վաղ անցյալում և առավել ևս՝ հիմա։

Կենդանական աշխարհը՝ իր ողջ բազմաձևություններով և տեսակներով, ինչպես և մարդկային հանրությունը իր ազգային տեսակներով, երկրագնդի վրա ունեն իրենց տարածական հստակ և ըստ ժամանակի պահպանվող կայուն բաշխվածությունը։

Պետք է ենթադրել, որ մատերիայի ինքնամերարտադրվող և տարածա-ժամանակային առումով շարժուն բոլոր ձևերի՝ կենդանական աշխարհի, մարդկային հանրության բոլոր տեսակներն ունեն երկրագնդի վրա իրենց ստեղծմանը, ձևավորմանը և կայացմանը զուգահեռ տարածական որոշակի բաշխվածության ստեղծման և զարգացման՝ ծագումնաբանորեն ամրագրման, հաստատավորման ինչ-որ բնական մեխանիզմ։ Այսինքն թե կենդանական և թե մարդկային հանրության որևիցե տեսակի պատկանող ամեն մի սուբյեկտ բնապատմական զարգացման հարատև ընթացքում, անկախ բնակլիմայական բոլոր հնարավոր փոփոխություններից, վերահարմարվելով նոր բնակլիմայական պայմաններին, այդուհանդերձ, մշտապես ձգտելու է պահպանվել երկրագնդի վրա իր «հասցեա-ում, ծագումնաբանորեն տարածական, ամրագրվածության» իր տեղում։ Հակառակ դեպքում կենդանական աշխարհի բնապատմական զարգացման հենց սկզբնական շրջանում դեպի բնակլիմայական ամենաբարենպաստ գոտու՝ հասարակածի շրջան, շարժումը կենդանական աշխարհին և մարդկային հանրությանը կհասցներ ընդհանրական կենսագործունեության, «տեսակի» պահպանման գործընթացի՝ էնտրոպիայի անընդհատ աճի, որն էլ կենդանական աշխարհի գոյատևման և գոյապայքարի «ջերմաստիճանի» անընդհատ աճի պատճառով թե կենդանական և թե մարդկային ողջ հանրությունը կտաներ ինքնաոչնչացման։ Սակայն փաստ է, որ նման համաշխարհային աղետ չի եղել և չի էլ սպասվում, քանզի ամեն մի սուբյեկտ մշտապես ձգտում է, ամեն մի ազդեցության հակազդելով, պահպանել իր ներկայությունը իր տեսակի համար ծագումնաբանորեն ամրագրված տարածական հասցեում. եթե իհարկե արտաքին ազդեցությունը այնքան մեծ չէ իր հակազդեցությունից, որ կարողանա վտանգել իր տեսակի գոյությանը գոյատևման իր հասցեում՝ հարթենիքում։ Հակազդեցության նկատմամբ ազդեցության փոքր լինելու դեպքում, երբ վտանգվում է տեսակի գոյությունը, տեսակի պահպանման գերակա տկզբունքի համաձայն տվյալ կենսաբանական, ազգային տեսակը նախընտրում է դուրս գալ իր ծագումնաբանորեն ամրագրված հասցեից, լուծելու համար նախ՝ տեսակի պահպանման խնդրի գոյատևման մասը, ապա՝ գոյատևման ապահով պայմաններում տեսակի հարատևմանը ներհատուկ գործոններից մեկին՝ Հայրենիքի խնդրին։ Տեսակը ձգտում է հնարավոր և ոչ հնարավոր ճանապարհներով վերադառնալ Հայրենիք՝ իր բնապատմական զարգացումն ապահովելու և հարատևման խնդիրը լուծելու նպատակաուղղվածությամբ։

ՀԱՅՈՒԹՅԱՆ՝ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ՀԱՅՐԵՆԻՔԸ ՎԵՐԱԳՏՆԵԼՈՒ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ՁԳՏՈՒՄԸ։ Հարյուրամյակներ առաջ պետականության կորստով, Հայաստանի և հայ ժողովրդի ոչ բնական, գաղութային վիճակով, անտանելի կացությամբ էր պայմանավորված հայության գոյատևման դժվարությունը։ Խաթարված էր անհատին և ազգին յուրահատուկ բնականոն կյանքն ու կենսագործունեությունը, արգելակվել, նվազագույնի էր հասել ազգի բնականոն, նպատակային զարգացումը։ Կենսաանհրաժեշտ պարզագույն խնդիրների

անլույծ մնալը տեղում՝ լրջորեն վտանգում էր ազգի գոյատևումը, մինչդեռ ազգային ընդհանրական մտածողությունը գործնականում այն լուծում էր արտագնա աշխատանքի շնորհիվ՝ կայուն, զարգացած, սեփականության նկատմամբ պետական պաշտպանվածություն ունեցող երկրներում (բազմաբնույթ աշխատանքներ, որոշակի նյութական, տեխնիկական, ֆինանսական կապիտալի ստեղծում)։ Նյութական արժեքները այս կամ այն չափով ներմուծվում էին Հայաստան, որով լրացվում էր ազգի կենսագործունեության անհրաժեշտ ճեղքվածքը, մասամբ ապահովելով ազգի գոյատևումը, մասամբ նաև հարատևմանն անհրաժեշտ հոգևոր զարգացումը։

Գոյատևման նման ապրելաձևի որդեգրումը, համաձայն ամենափոքր գործողության սկզբունքի, թվում է, պետք է որ առնվազն մեկ հարյուրամյակի ընթացքում հայաթափեր Հայաստանը, սփռելով հայությունը աշխարհով մեկ։ Սակայն հարյուրամյակների պատմությունը ցույց է տալիս հակառակը։ Որքան էլ բարվոք է եղել հայերի վիճակը արտերկրում, միևնույն է՝ ազգի գերակշիռ մասը մնացել է հայրենիքում, իսկ փոքր մասը հայ գաղթավայրերում, ընդ որում՝ ոչ թե որպես մշտաբնակներ, այլ հիմնականում հայրենիք վերադարձողներ։ Այսինքն արտերկրի թե բնակլիմայական, թե պետական, իրավական, քաղաքացիական բարվոք ու ապահով պայմանները, Հայաստանից դուրս մարդկային կյանքով լիարժեք ապրելու իրական հնարավորությունները ամենևին հիմք չեն եղել դարեր շարունակ պետականությունը կորցրած, անգամ ինքնանպատակ դարձած գոյատևման մղձավանջում գտնվող Հայ ժողովրդին հայրենիքը լքելու, աշխարհով մեկ սփռվելու համար։

Պետք է ենթադրել, որ մարդկային հանրության բնության համար ամենափոքր գործողության սկզբունքին զուգահեռ և դրա նկատմամբ գերակա գործում է բնական մեկ այլ օրենք, մեխանիզմ ևս, որը ամեն մի ցեղի, ազգի պահում է համահավաք իր ազգային կենսատարածքում՝ Հայրենիքում։

Հայերի՝ իրենց հայրենիքի նկատմամբ հոգևոր և ֆիզիկական անքակտելի կապվածության ապացույցներից են նաև Հայոց պատմության վերջին հարյուրամյակի եղերական էջերը։ Աբդուլ Համիդի կողմից Արևմտյան Հայաստանում 1894—1896 թվականների պետականորեն կազմակերպված հայկական ջարդերը լուրջ պատճառ դարձան կոտորածներից փրկված հայության մի ստվար զանգվածի համար Հայաստանը լքելու և աշխարհով մեկ սփռվելու համար։ Եվ առաջին հայացքից որքան էլ տարօրինակ թվա, երբ տահընկեց արվեց Համիդը և Թուրքիան երիտթուրքերի կողմից փրեն հռչակեց իբր սահմանադրական պետություն, արտերկրի հայության մեջ ակնբախ դարձավ հայրենիք վերադառնալու ձգտումը։

Ջանդած ընդամենը մի քանի տարի հայության գլխին պայթեց մի նոր, աշխարհում դեռ չտեսնված և չլսված 1915 թ. ցեղասպանության արհավիրքը։

Երիտթուրքերը պետականորեն և նորովի ծրագրավորեցին և կոուրեցին հայության բնաջնջման և Արևմտյան Հայաստանի լրիվ հայաթափման հրեշավոր ծրագիրը։ Հրի ու սրի մատնվեցին 1,5 միլիոն հայ, ավերվեց գրեթե ողջ Արևմտյան Հայաստանը, թալանի ու բռնագաղթի ենթարկվեց և աշխարհով մեկ սփռվեց ժողովրդի ողջ մնացած մասը։

Թվում էր, թե ողջ մնացածների համար այլևս անհնար պետք է լիներ հայրենիք վերադառնալու խնդիրը մտքի ծայրով անգամ անցկացնելը։ Սակայն որքան էլ անբնական է թվում առաջին հայացքից, բայց եղերական օրերից չէր անցել ընդամենը մի քանի տարի և սկսվեց նկատվել «Երկիր»՝ հայրենի տուն վերադարձողների առաջին զգուշավոր քայլերը. սկսվում էր ձևավորվել Հայրենիք վերադառնալու համառ գործընթացը։ Ցավոք այդ գործընթացն էլ սառեցվեց 1918—1923 թթ. կոտորածներով։

Արևմտահայության զգալի մասը ստիպված տնավորվեց, տեղավորվեց աշխարհի գրեթե բոլոր երկրներում. ձևավորվեց, ծավալվեց հայկական Սփյուռք կառույցը, որը դարձավ հայրենիքի 9/10-րդը կորցրած հայության

կեսից ավելիի ապաքինման, կենսագործունեության, հոգևոր և ֆիզիկական վերածննդի կայուն դրավիճակներ։ Այսքանից հետո ամենափոքր գործողության և տեսակի պահպանման, կենսաբանական սկզբունքների տեսանկյունից թվում է, թե հայությունը պետք է որ մոռանար իր համար կատարյալ դժոխքի վերածված իր Հայաստան հայրենիքը և համակերպվեր իրեն հոգևոր, նյութական և ֆիզիկական լրիվ ապահովվածություն, պաշտպանվածություն, ասպնջականություն և իրավահավասարություն ապահոված ժողովուրդների հետ միասին, նրանց երկրներում ապրելուն։ Առավել ևս, որ առ այսօր այդ երկրների և ժողովուրդների կողմից չի գրանցվել հայատեցության, հայերի օտարման և ոչ մի դեպք։ Այդուհանդերձ, բռնագաղթի ենթարկված հայության բոլոր սերունդները շարունակաբար մշտապես իրենց զգում են որպես ժամանակավոր հյուր այդ երկրներում։ Հայրենադարձության ծայր առած հոսքը Մեծ Եղեռնից դեռ մեկ տասնամյակ էլ չանցած դրա առարկայական դրսևորումն էր։ 1921—1936 թթ. Հայաստան հայրենադարձվեց ավելի քան չորս տասնյակ հազար մարդ։

Աշխարհամարտը կասեցրեց առավել ընդարձակվելու միտում ունեցող այս գործընթացը, որը ողջ թափով վերսկսվեց 1946 թ. և շարունակվեց հետագա տասնամյակներին։ Սփյուռքահայերի կենսապայմանների բարելավմանը զուգահեռ ավելի խորանում և ուժգնանում է հայրենիքի կարոտը, վերադարձի ձգտումը։ Հայության ազգային ընդհանրական մտածողության առաջնային և հիմնական պլան է մղվում Հայ Դատի լուծման, հայրենիք՝ Արևմտյան Հայաստան վերադառնալու խնդիրը։ Ամբողջական Հայրենիքի խնդրի լուծման համազգային անընդհատ ձգտումը ամեն մի հաջորդ սերընդի կողմից հարցի նորովի ամրագրման և ըստ աշխարհի նոր իրականությանը համապատասխան խնդրի լուծման նոր հնարավորությունների որոնման զանգվածային այս հարաճուն ուժգնացող և ոչ մարող երևույթը իրավամբ պետք է որակել որպես ազգային զանգվածային՝ գիտակցական և ենթագիտակցական, բնական, կենսաֆիզիկական, կենսաբանական օրինաչափություն։ Կոչված լինելով հարատևման խնդրի լուծմանը մասնակից լինելուն, այն գերակա է և իր ազդեցությամբ հաղթահարում է լոկ ինքնանպատակ ոլորտևումն ապահովող, այսպես կոչված «պարզ, առողջ» դատողությանը, ամենափոքր գործողության սկզբունքին։

ԿԵՆՍԱՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԴԱՇՏԸ ՈՐՊԵՍ ԲԱՆԱԿԱՆ ՄԱՏԵՐԻԱՅԻ ԲՈԼՈՐ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻՆ ՆԵՐՀԱՏՈՒԿ ԻՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ։ Ընդունելով իրականը տարածաժամանակային ծավալաձգվածության և բնապատմական զարգացման մեջ մեկ փոխկապակցված, փոխազդվող և փոխազդող ամբողջական ընդհանրություն է հիմնադրությունը և ձգտելով տեսնելու աշխարհը մեկ օրգանական ամբողջականության մեջ, դիտելով մարդկային հասարակությունը, կենդանական, բուսական և ֆիզիկական աշխարհները իբրև այդ ընդհանրության մեջ համագործակցող, փոխազդող համակարգեր, անհրաժեշտ է դառնում տարբերակել և հետազոտել թե՛ մարդկային աշխարհում անհատների փոխազդեցությունները, ինչպես և այն, թե դրանք հանրության զանգվածի հետ ինչով, ինչպիսի ձևերի, մեխանիզմների և օրենքների հիման վրա են գործում։ Բնականաբար, անհատ-անհատ և անհատ-հասարակություն, անհատ-բնություն և հասարակություն-բնություն՝ փոխհարաբերությունների, դրանց օրինաչափությունների, հասարակության կառուցվածքային օրենքների և դրանց զարգացման խնդիրների լուծումների ընթացքը կանխավ պայմանավորված է ելակետային մոտեցումների ընտրությամբ։ Տվյալ քննարկման համար մենք կառանձնացնենք հետևյալ մոտեցումները՝

Ա) Մարդը՝ անհատը, առանձնացված է հասարակությունից և բնությունից. այսինքն նա ներկայանում է որպես ամբողջի մեխանիկական, թվաբանական մասը։

Բ) Մարդը հասարակության և բնության օրգանական. կառուցվածքային մասն է, ամբողջի անբաժանելի մասը և իր տեղով, դերով ու նշանակությամբ ամբողջացնում է ընդհանրությունը։

ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴՐԱԴԱՐՁՄԱՆ ՏԱՐԲԵՐԱԿ։ Քննության հիմքում դեռևս դնենք համակարգի կայունության՝ ամբողջականության պահպանման անհրաժեշտությունը իր՝ համակարգի ձևավորման, գոյատևման, հարատևման, այսինքն բնապատմական զարգացման բորոր շրջանների համար։

Երբ մարդկային միջավայրը՝ հասարակությունը, դիտում ենք որպես անհատների մեխանիկական ընդհանրություն, այսինքն մարդուն առանձնացնում ենք միջավայրից, նույն մոտեցումով զուգահեռաբար նաև կենդանական աշխարհից, ապա բնականորեն հետևում է, որ մարդը, որպես առանձին համակարգ, գործում է լրիվ ինքնուրույն։ Ինչ խոսք, այս մոտեցման դեպքում նրա գործունեությունը ամբողջապես հենված պետք է լինի բնության ընդհանրական օրենքների, սկզբունքների և օրինաչափությունների վրա։ Այսինքն երկու և ավելի մարդկանց, ինչպես նաև մարդ-կենդանի փոխադարձ կապերը, փոխազդեցությունները պայմանավորված են լինում միայն բնական օրենքների ընդհանրությամբ ապահովված փոխմիաժամանակությամբ։ Այսինքն, երկու անհատ միմյանց հետ համագործակցում են՝ օգտագործելով տվյալ իրավիճակին համապատասխան օրենքները որպես միմյանց հետ կապող, իրար համաձայնեցնող համակարգ։ Հետևաբար, նրանց կապող տեղեկատվական շարժառիթային գործոնը դուրս է իրենցից, այսինքն գործում է այսպես կոչված անդրադարձային կապի համակարգը։ Սույն մոտեցումից բնականորեն հետևում է, որ հասարակական, ինչպես նաև կենդանական կառույցների կայուն կենսագործունեության համար անհրաժեշտորեն պահանջվում է բարձր կազմակերպվածություն, կառուցվածքային օրենքների և նրանց պահանջների հստակ, անընկրկելի և ըստ ժամանակի ներդաշնակ կիրառություն։ Հակառակ դեպքում համակարգը, որպես մեկ ընդհանրություն, շատ արագ կքայքայվի, կտրոհվի տարրերի՝ անհատների, հեռացման, ինքնամեկուսացման ճանապարհով։ Նման համակարգը իր գոյության ընթացքում, ըստ էության, գտնվում է անկայուն հավասարակշռության վիճակում, որի կամայական խոտորումը անդարձելի գործընթացով համակարգը կտանի լրիվ տրոհման։ Ի դեպ, ամենևին պարտադիր չէ, որ խոտորումը լինի արտաքին ազդեցությունով պայմանավորված և կամ լինի դրա հետևանքը, քանզի անգամ բորոր արտաքին հնարավոր ազդեցությունների բացառման դեպքում հնարավոր չէ համակարգը պաշտպանել իր իսկ բնապատմական զարգացումով պայմանավորված ազդեցություններից։ Նման ինքնակարգավորման և ինքնակառավարման հնարավորությունից զուրկ համակարգին հույժ անհրաժեշտ է դառնում ինչպիսի կենտրոնի՝ ցեղապետի, միապետի, պետականության անդրդվար և անմիջական, անհատ-հասարակություն փոխհարաբերությունը հեռահար և դեկավարող միջամտությունը, որը սակայն հնարավոր է իրականացվել համակարգի արդեն ձևավորվածության պայմաններում։ Այստեղից հետևում է, որ եթե համակարգը, այդուհանդերձ, անկայուն է անգամ բարձր կազմակերպվածության պայմաններում, ապա իր ձևավորման սկզբնական շրջանում առավել ևս դատապարտված է չգոյության։ Այսինքն, հիմքում դնելով այս մոտեցումը, ակնհայտ է դառնում, որ թե մարդկային և թե կենդանական աշխարհի ձևավորումը, էլ ուր մնաց այսօրվա հայտնի կառուցվածքային ձևերը ստանալու հնարավորությունը կբացառվեր։

Այսպիսով, Ա) մոտեցումը ընդունելի և կիրառելի չէ մատերիայի ինքնաբերարտադրվող բարձրագույն ձևի, բանական մատերիայի համակարգերի ձևավորման, բնապատմականորեն կայուն կենսագործունեության և զարգացման ապահովման հարցերում։

Մատերիայի ինքնավերարտադրվող ձևի ենթակառույցների համար մոտեցման Ա) տարբերությունը կոչենք երկու համակարգերի համագործակցության տեղեկատվական կապի անդրադարձման տարբերակ, որը մենք ոչ բնական և անհնար ենք համարում նաև այն տեսանկյունից, քանի որ մշտապես կասկածելի է մնում անդրադարձվող ազդեցության օբյեկտիվ իրականությունը, ընկալման ճշտությունը. առկա է այն կեղծ լինելու, ինչպես նաև կեղծելու հնարավորությունը։ Այն հիմնականում հենվում է ամենափոքր գործողության սկզբունքով պայմանավորվող այսպես կոչվող անմիջականն, մաքուր շահեկանության վրա ,որը առավել ևս բանական համակարգերի կենսագործունեության համար անհրաժեշտ, բայց ոչ բավարար պայման է, քանզի այն ձգտելով ինքնանպատակայնության, աստիճանաբար համակարգը կդրկի նպատակայնությունից, որն էլ իր հերթին կհասցնի համակարգի հաղատեման բացառմանը, այսինքն ինքնաոչնչացման։

Ամենափոքր գործողության սկզբունքը իր հերթին բնականորեն կարգելակի հարաբերություններում ստեղծագործական նախաձեռնության զարգացումը և դրանով պայմանավորված բանականության ներմուծումը, այսինքն կարգելակի ամենամեծ գործողության սկզբունքի գործունեությունը։

Կարծում ենք, որ ավելի իրական, ճշմարտամոտ պետք է համարել այն, որ բնությունն իր ընդհանրության մեջ մատերիայի բոլոր ձևերով և տեսակներով, բոլոր մասերով կառուցված է օրգանական որոշակի, մասնավոր ընդհանրություն կազմող տարրերից։ Ինքնավերարտադրվող մատերիան՝ մարդկային, կենդանական, բուսական աշխարհները, որպես մատերիայի ընդհանրական ձև, իր մեջ կրում է բանական մատերիայի՝ մարդկային հասարակությունն ենթաձևը, որը ինքնին որոշակի ընդհանրություն է։ Կենդանական աշխարհը, ինչպես նաև բուսական աշխարհը իրենց մասնավոր ընդհանրություններով որոշակի միասնություններ են, որոնց ամբողջականությունը իրենց հերթին կազմված է տեսակներից։ Տեսակներն էլ իրենց հերթին ներկայանալով որպես խիստ որոշակի ամբողջականություն կազմող ընդհանրություններ, իրենց, հերթին կազմված են տվյալ տեսակի էությունը, ընդհանրական բնութագրերը կրող, պահպանող, ժառանգող և վերարտադրող անհատներից։ Ընդ որում, կամայական տեսակի ամեն մի անհատ օրգանիզմ իր անհատական ամբողջական ընդհանրության մեջ ի հայտ է գալիս որպես մեկ միասնական օրգանիզմ՝ իր բոլոր կառույցների անհակադիր, ներդաշնակ, միմյանց լրացնող և միմյանցով պայմանավորված մասերով։

ՄԱՐԴԸ ՕՐԳԱՆԱԿԱՆ ՄԱՍՆ Է ԱՄԲՈՂՋԻ՝ ԲՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ։ Տվյալ մոտեցման տեսանկյունից քննության առնենք մատերիայի ինքնավերարտադրվող ձևերը՝ մարդուն, մարդկային հանրությունը և կենդանական աշխարհը։ Երկու ձևին էլ հատուկ է ենթագիտակցական մտածողությունը, որով կազմակերպված է և որով կարգավորվում է անհատ օրգանիզմի կենսագործունեության ողջ ընթացքը, կառավարվում են զարգացման և պաշտպանական ֆունկցիաները, ապահովվում ֆիզիկական միջավայրի հետ փոխազդեցության, հարմարվելու խնդիրները։

Գործունեության այս տիրույթում ենթագիտակցական մտածողությունը հիմնականում հենվում է ծաղումնաբանական կառուցվածքային մեխանիզմների, օրենքների, ինչպես նաև արտաքին աշխարհից բոլոր զգայարաններով գրանցված տեղեկատվության վրա։ Այդքան մասով թեև կարելի էր որոշակիորեն հենված մնալ մոտեցման Ա) տարբերակին։ Սակայն արդեն ինքնավերարտադրման՝ անհրաժեշտ համապատասխան զույգի որոնման, սերնդի ստեղծման, ընտանիքի ձևավորման, հասարակական ավելի բարդ կառույցների ստեղծման և ինքնազարգացման գործընթացներում երկու և ավելի տարրերի համագործակցության փոխհարաբերություններում, ինչպես նաև տեսակի պահպանման խնդիրներում ի հայտ է գալիս նրանց ենթագիտակցությունները անմիջական կապի մեջ դնող, ընդհանրական ենթա-

գիտակցական մտածողություն ստեղծող նյութական տեղեկատվական դաշտի օբյեկտիվ անհրաժեշտությունը։

Մերնդի զարգացման, արտաքին աշխարհի հետ փոխազդվելու, կենսագործունեության տարրերի, սկզբունքների հետ ծանոթանալու, վարժվելու խնդիրներում ուղղակի անհրաժեշտություն է դիտվում ենթագիտակցական մտածողությունների անմիջական կապով փոխազդվելու խնդիրը։

Հասարակության ամենատարրական կառույցից ընտանիքից, դարգանալով դեպի կազմակերպչական առումով ավելի բարդ կառույցի, որն է կենդանական աշխարհում հոտը, երամը, մարդկանց համար տոհմը, ցեղը, ցեղախումբը, ժողովուրդը, ազգը, անհնար է լինում այդ կառույցների ըստ ժամանակի և տարածության գոյության, կայունության և հարատևման խնդիրները լուծել միայն ի սկզբանե դրված և հաստատուն ներքին ծագումնաբանական կառուցվածքային օրենքներով (բնազդներ)։ Այդ կառույցների համար արդեն որպես ուղղակի անհրաժեշտություն ներկայանում է տվյալ կառույցի բոլոր ենթագիտակցական մեխանիզմների հետ առնչվող, նրանց մեկ ընդհանրության բերող և արդեն դրան յուրահատուկ և անհրաժեշտ ընդհանրական խնդիրները լուծող, այսպես կոչված ընդհանրական ենթագիտակցական մտածողության ստեղծումն ապահովող դաշտի առկայությունը։

ԿԵՆՍԱՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԴԱՇՏ։ Շրջանցենք այն, թե կենսատեղեկատվական դաշտը ֆիզիկական ինչպիսի երևույթ է, ինչպես է տարածվում և ինչպես է ապահովում ուղիղ և հետադարձ տեղեկատվական կապը, ինչպիսին է նրա գործունակության շառավիղը և ուրիշ ինչպիսի ֆիզիկական բնութագրեր ունի, քանի որ այդ խնդիրները այլ հետազոտությունների առարկա են։ Բավարարվենք սահմանելով կենսատեղեկատվական դաշտի գոյության վարկածը և ընդունելով, որ այն, որպես նյութական ֆիզիկական դաշտ, նույնական է զրավիտացիոն դաշտին, տարածվում է անարգել, վերջավոր արագությամբ։ Սահմանենք նաև, որ ըստ մատերիայի ձևերին և ենթաձևերին համապատասխան տեսակների, այդ դաշտը իր ընդհանրության մեջ մասնատվում է որոշակի կանոնավորված բաշխվածության, ըստ հաստատուն, պահպանվող օրինաչափությունների, հատվածային տիրույթներ ընդգրկող ամբողջական փաթեթների, որոնց մենք կանվանենք տվյալ ՏԵՍԱԿԸ՝ ԱԶԳԸ ԲՆՈՐՈՇՈՂ ԾԱԳՈՒՄՆԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ։

Այսպիսով, մարդը, որպես ֆիզիկական սուբյեկտ և օբյեկտ կենսատեղեկատվական դաշտ առաքող և ընդունող է։ Նա գործում է ընդհանրական տեղեկատվություն կրող դաշտի առկայությամբ՝ գոանդելով իրեն հասցեագրված կամ իրեն յուրահատուկ և անհրաժեշտ տեղեկատվություններ, զուգահեռաբար շրջապատին առաքելով իր մասին և իր ենթագիտակցական մտածողության արդյունք հանդիսացող տեղեկատվություն։ Այսպես կարևորվում է տվյալ տեսակի և նրա բաղադրիչ անհատների տեղեկատվական դաշտի ՀԱՍՏԱՏՈՒՆ ԲՆՈՒԹԱԳՐԱՅԻՆ ՓԱԹԵԹՆԵՐԻ ՀԱՄԸՆԿՆԵԼԻՈՒԹՅԱՆ՝ ՆՈՒՅՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ խնդիրը։

Այսպիսով պետք է ենթադրել, որ ինքնավերարտադրվող մատերիայի կենսագործունեության, գոյության և հարատևման ոլորտներում հենց կենսատեղեկատվական դաշտի հաստատուն բնութագրային փաթեթի հատվածային տիրույթով է պայմանավորված ՏԵՍԱԿԻ առանձնացումը և նրա միջոցով է գործում տեսակի պահպանման օրենքը։ Այս մոտեցման տեսանկյունից կարևորվում են նաև անհատական ենթագիտակցական մտածողության, հաշվարկի, վերլուծության, եզրահանգման, լեզվի, նրա ծրագրային հիմքի, այսպես կոչված ենթագիտակցական լեզվամտածողության խնդիրը (ընդհանրապես ինքնավերարտադրվող մատերիայի համար) և մատերիայի բանական ձևի՝ մարդու և նրա տեսակների՝ ազգերի, ենթագիտակցական և գիտակցական բանական տեղեկատվության փոխազդեցության, բանական մտածողության, ազգային լեզվի և լեզվամտածողության խնդիրները։

ԱՆՀԱՏԻ ՆԵՐՔԻՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ, ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԲԱՇԽՄԱՆ ԲՆԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՕՐԵՆՔ։ Որպես կենդանի օրգանիզմ, մարդը օժտված է իր կառուցվածքային, չափերին և գործունեությանը անհրաժեշտ ու համապատասխան որոշակի, էներգետիկական հզորությամբ։ Ընդունելով սնունդ, ջուր և թթվածին, տվյալ օրգանիզմը դրանք վերարտադրում է էներգիայի անհրաժեշտ ձևերի և բնական կարգավորումով կատարում համապատասխան բաշխում։

Սուբյեկտի ձևավորման և աճի շրջանում էներգիան օրգանիզմի զարգացմանը զուգընթաց աճելով՝ բաշխվում է հետևյալ կենսական ֆունկցիաների բավարարման համար՝ (թվարկումը և դասակարգումը կրում են նախնական և ընդհանուր բնույթ).

ա) կենսագործունեություն, բ) ֆիզիկական աճի և գործունեության, գ) կենսագործունեության աշխարհաճանաչողական վարժեցման, դ) մտավոր ներուժի կուտակման, ե) կենսատեղեկատվական դաշտի երկկողմանի գործունեության, զ) տեսակի պահպանմանը հետամտող պաշտպանական խնդիրների։

Արդեն լիովին ձևավորված սուբյեկտի մեջ վերարտադրված էներգիան բաշխվում է օրգանիզմի ֆունկցիոնալ գործունեության հետևյալ խնդիրների միջև.

ա) օրգանիզմի կենսագործունեության, բ) ֆիզիկական գործունեության, գ) կենսատեղեկատվական երկկողմ կապի, դ) մտավոր գործունեության՝ (գիտակցական և ենթագիտակցական), ե) տեսակի վերարտադրման՝ սերընդաստեղծման, նրան հոգևոր և մտավոր ժառանգության փոխանցման, զ) տեսակի պահպանմանը հետամտող պաշտպանական խնդիրներիր, է) իր տեսակի գոյատևման բնապատմական զարգացման և հարատևման խնդիրներին։

Քանի որ օրգանիզմը կառուցված է առավելագույն արդյունավետության և նպատակահարմարության սկզբունքով, ապա ակնհայտ է, որ վերարտադրվող էներգիան հիմնականում ծախսվում է օրգանիզմի ընդհատ գործունեության վրա։ Ներքին էներգիայի պահեստավորման մասը չնչին է, որն էր ֆունկցիոնալ առումով ծառայում է միայն խիստ ճգնաժամային, չնախատեսված վիճակներում կարճաժամկետ կենսագործունեության ապահովմանը։ Երբ օրգանիզմն ինչ-ինչ պատճառներով դուրս է գալիս իր բնական համաչափ ռիթմից կամ երբ առաջանում է նրա զոյությունը սպառնացող վտանգ, այդ դեպքում օրգանիզմը, ըստ առաջնային անհրաժեշտության բավարարման, էներգիայի մեծ մասը նպատակաուղղում է սպառնացող վտանգի օջախը վերացնելուն կամ դրանից խուսափելուն։ Քանի որ օրգանիզմի ներքին էներգիան սահմանափակ է և ոչ բնականոն և հավելյալ էներգիայի անհրաժեշտության վիճակներում չունի դրսից՝ այլ աղբյուրներից, այդպիսին ներմուծելու հնարավորություն, ապա օրգանիզմը տվյալ անհրաժեշտության խնդիրը լուծում է հաշիվ մնացած ֆունկցիաների։ Կատարվում է դրանց էներգամատակարարման կտրուկ նվազեցում, որը որոշ ուղղություններում երբեմն հասնում է զրոյի, օրինակ, երբ օրգանիզմ է ներթափանցում ինչ-որ հարուցիչ կամ մարմինը ստանում է ֆիզիկական վնասվածք, այդ դեպքում էներգիայի ստվար մասը տրամադրվում է խորթ մարմնի՝ հարուցչի օտարմանը կամ չեզոքացմանը։ Վնասվածքների դեպքում, երբ էներգիայի անբավարարությունը լինում է այնքան, որ անհնար է լինում իրականացնել մտավոր գործունեություն, ինչպես և ֆիզիկական տարրական գործողություններ, սուբյեկտը վերածվում է անկողնային հիվանդի։

Այսպիսով նման իրավիճակներում տեղի է ունենում օրգանիզմի ներքին էներգիայի բնականոն անհրաժեշտ համամասնության բաշխվածության ժամանակավոր խախտում. նույնը տեղի է ունենում վերը թվարկած՝ ա-զ կե-

տերից և որևիցե մեկի գործունեության բնականոն վիճակից ամեն մի, անգամ մասնակի շեղման դեպքերում։

Երբ տվյալ օրգանիզմը գտնվում է իր տեսակին համապատասխան միջավայրում, այսինքն՝ իր ազգային կենսատարածքում՝ Հայրենիքում, իսկ սարգկային հանրության և փոխհարաբերությունների առումով հիմնականում շրջապատված է իր ազգային համահավաք ամբողջականությամբ և իր տեղով, դերով ու նշանակությամբ կազմում է ամբողջի՝ ազգի մասը, ապա նրա՝ իր հզորությունը համապատասխան վերարտադրած էներգիան լրիվ արդյունավետությամբ տրամադրվում, բաշխվում է գոյատևման և հարատևման խնդիրների կատարմանը, ըստ համապատասխան գործունեության ոլորտների։ Այս դեպքում անհատը գտնվում է նայուն հավասարակշռության բնականոն, համաչափ, ներդաշնակ կենսագործունեության զարգացման վիճակում։

Սակայն բավական է, որ անհատը դուրս գա իր ազգային տարածական աշխարհագրական և հասարակական միջավայրից, գտնվի իր ազգակիցներից հեռու և շրջապատված լինի, ազգային ծագումնաբանական առումով օտարներով, որպեսզի կտրուկ աճի տեսակի պահպանման պաշտպանական ֆունկցիաների համար ծախսվող էներգիայի քանակը։ Էներգիայի որոշակի դերածախս է կատարվում նաև անհատի կենսատեղեկատվական գործունեության ոլորտում, ներկրվող տեղեկատվության գենետիկական ոչ համապատասխանության պատճառով՝ թարգմանական գործունեության, համապատասխանեցման վրա ծախսվող էներգիայի չափով։ Այդ դեպքերում էներգիայի պակասը առաջնայնորեն անդրադառնում է անհատի մտավոր զարգացման, ստեղծագործական նախաձեռնության կարողությունների վրա, նվազեցնելով դրանց գործունեությունը և սահմանափակելով հնարավորությունները։

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԴԱՇՏԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԷՈՒԹՅՈՒՆԸ. ԿԵՆՍԱԳՐԱՎԻՏԱՑԻՈՆ ՀԱՍՅԵ։ Ամենայն հավանականությամբ կենսատեղեկատվական դաշտը կենդանի օրգանիզմի կողմից գրավիտացիոն դաշտի քվանտացված դրդրման էներգիայի՝ ազդանշանների ճառագում է։ Ճառագայթման էներգիայի աղբյուրը տվյալ մարմնի զանգվածի ներբջիջային գրավիտացիոն դաշտն է։ Այն տարածվում է տվյալ աղբյուրների շրջակա միջավայրում և այլ զանգվածների գրավիտացիոն դաշտերի առկայությունից ու նրանց բաշխվածությունից անկախ, ունի մեծ թափանցելիություն։ Կենսատեղեկատվական դաշտի ֆիզիկական բոլոր բնութագրերը՝ տարածման, ինտենսիվության բաշխման, փոխազդեցության օրենքները նույնն են, ինչ ոչ օրգանական զանգվածի կայուն գրավիտացիոն դաշտինը։

Այսպիսով, կենսատեղեկատվական ազդանշանը մեր տեսանկյունից ոչ այլ ինչ է, եթե ոչ մարմնի գրավիտացիոն դաշտի որոշակի կանոնավորման, հաջորդականության և դասավորվածության՝ զաղտնագրման (կոդավորման), ներբջիջային գրավիտացիոն դաշտի քվանտացված դրդման ազդանշանների ճառագում։

Այստեղից, բնական է եզրակացնելը, որ կենսագրավիտացիոն ճառագման հատկություն ունեցող կենդանի օրգանիզմը պետք է տանեն նաև այլ մարմնի կողմից ճառագած նույնական ազդանշանների ընդունման, դրանց ենթագիտակցման հիշողության մեխանիզմում այն ամրագրելու, վերլուծելու վերծանելու հնարավորություն։ Ենթագիտակցական մեխանիզմի սույն հնարավորությունն ու հատկությունն էր երկու և ավելի անհատների միջև ենթագիտակցական տեղեկատվական անմիջական կապի և նրանց փոխազդեցության, այսպես կոչված բնազդային փոխգործակցության, ինչպես նաև գանգվածային մտածողության և դրա որսորման մեխանիզմն է։

ԿԵՆՍԱԳՐԱՎԻՏԱՑԻՈՆ ՀԱՍՅԵ ԿԱՄ ԾՆԴԱՎԱՅՐ, ՀԱՐԱՎԱՍ ՄԻՋԱՎԱՅՐ, ՀԱՅՐԵՆԻՔ։ Քանի որ կենսատեղեկատվական դաշտը մեզ հայտնի գրավիտացիոն դաշտն է, իսկ նրա տեղեկատվություն կրող ազդանշանները

իրենցից ըստ էության ներկայացնում են որոշակի հաճախականությունների, կանոնավորվածության, հաջորդականության և դասավորվածության դրավիտացիոն դաշտի հատվածային խտացումների քվանտացված բաժիններ, ուստի պետք է ենթադրել, որ կենդանի օրգանիզմը, գտնվելով երկրագնդի և իր շրջակա միջավայրի առկա զանգվածներով պայմանավորված ընդհանրական գրավիտացիոն դաշտում, պետք է որ որպես շրջապատի ազդեցություն, անընդհատորեն զգա նաև շրջակա միջավայրի գրավիտացիոն դաշտի տարածական պատկերը՝ իր ողջ ընդհանրական և մասնակի դրսևորումներով։ Այսինքն, այն պետք է զգա շրջակա գրավիտացիոն դաշտի ներունակ (պոտենցիալ) էներգիայի տարածաժամանակային բաշխվածությունը, ինչպես և նրա ժամանակի պարբերական և ոչ պարբերական փոփոխությունները։

Հայտնի է, որ ոչ սֆերիկ որոշակի սեղմվածություն ունեցող Երկրի զանգվածը, ըստ խտությունների, ունի տարածական որոշակի բաշխվածություն, որով և պայմանավորված է երկրի մակերևույթի կամայական կետի տեղային գրավիտացիոն մակրո նկարագիրը։ Եթե այդ նկարագրին ավելացնենք նաև տվյալ տարածքի գրավիտացիոն ռելեֆային և ընդերքի զանգվածի տարարժեք միկրոբաշխվածության պատկերը, ապա կարելի է պնդել, որ երկրի մակերևույթի ամեն մի կետ, ամեն մի տարածաշրջան ունի իր յուրահատուկ բնութագիրն ունեցող և պահպանվող տարածաժամանակային գրավիտացիոն հոլոգրաֆիկական պատկերը։

Տվյալ տարածքի գրավիտացիոն տարածական, ընդհանրական նկարագիրը՝ պատկերը, անվանենք այդ տարածքի գրավիտացիոն հասցե, որի ընդհանրական և մասնավոր բնութագրերով փաստորեն որոշվում և մյուսներից առանձնացվում, տարբերակվում է տվյալ տարածքը։

Ընդունենք նաև, որ կենսատեղեկատվական դաշտի ընդհանրական փաթեթը մեկն է ազգի ծագումնաբանական կառուցվածքային հիմնական «տեսակները» միմյանցից զատորոշող, ժառանգաբար փոխանցվող, բնապատմական զարգացման (էվոլյուցիայի) ընթացքում անփոփոխ և ըստ տարածաժամանակի խստորեն պահպանող հիմնական մեծություններից։ Այստեղից, բնականաբար, հետևում է, որ կենսատեղեկատվական դաշտի հիմնական փաթեթով է պայմանավորված և նրանով է ղեկավարվում մատերիայի բանական ձևում տեսակի պահպանման օրենքը, որն է՝ ազգի պահպանման, հարատևման, կենսագործունեության, ինքնավերարտադրման, գոյության զարգացման օրենքը։ Այստեղից կարելի է ենթադրել, որ ամեն մի ազգ, ձևավորվելով մոլորակի մի որոշակի տարածքում, ի սկզբանե, իր ձևավորման ժամանակաշրջանում մշտապես գտնվելով տվյալ տարածքին յուրահատուկ գրավիտացիոն դաշտի որոշակի միկրոբաշխվածության՝ ֆոնի միջավայրում, որը պայմանավորված է տարածաշրջանի ռելիեֆով՝ (սարեր, ձորեր, ծովեր, ինչպես նաև ընդերքի խտությունների բաշխում) իր տեսակի՝ ազգի, կենսատեղեկատվական դաշտի հիմնական փաթեթի տվյալների հետ ենթագիտակցական հիշողության համակարգի հիմնական ամրագրման մասում պետք է գրանցած ունենա տվյալ տարածքի կենսագրավիտացիոն «հասցեն», որպես տվյալ ազգի տարածական տեղաբաշխման ծագումնաբանական հասցեագրումով ամրագրված հիմնական տարածք։ Հետագայում այն կանվանենք նաև կենսատարածք։

Այսպիսով, տվյալ ազգին պատկանող ամեն մի անհատի ենթագիտակցական, ազգային ծագումնաբանական հիշողության համակարգում, որպես պահպանվող մեծություն ամրագրված է տվյալ ազգի կենսագրավիտացիոն հասցեն։ Կենսագրավիտացիոն հասցեն իր ընդհանրության մեջ կառուցված է միմյանց լրացնող և անհրաժեշտորեն դեպի մեկ ամբողջություն ծավալվող ենթահասցեներից, որոնք են.

ա) ԾՆՆԴԱՎԱՅՐ։ Կենսագրավիտացիոն այս «ենթահասցեն» անհատի ծննդյան, ձևավորման և հասունացման ժամանակահատվածում գտնվելու

տարածքի գրավիտացիոն միկրոբաշխվածության նկարագիրն է, որի պահպանվող մասը ժառանգվում է ծնողներից, իսկ տվյալ անձով պայմանավորված անհատական լրացման մասը ամրագրվում է ծննդյան և աճման ժամանակահատվածում, որը, ի դեպ, ժառանգաբար չի փոխանցվում։

բ) ՑԵՂԱՅԻՆ ԵՆԹԱՏԱՐԱԾՔ։ Այս ենթահասցեն տվյալ ազգի որոշակի տոհմի, ցեղի, ցեղախմբի ձևավորման և կենսագործունեության ժամանակահատվածում նրան պատկանող տարածքի կենսագրավիտացիոն պատկերն է, որը ենթագիտակցական հիշողության համակարգում կազմում է ամբողջական կենսագրավիտացիոն ծագումնաբանական հասցեի կարևոր բաղկացուցիչ մասը, ծագումնաբանորեն պահպանվող ազգային հատկանիշը, որը բնապատմական զարգացման ողջ ընթացքում չի ենթարկվում փոփոխության, այլ ժառանգվում է նույնաբար։ Այդ հատկանիշը կենսագրավիտացիոն դաշտի ծագումնաբանորեն պահպանվող մնացած գործոնների՝ լեզվի, նրան յուրահատուկ բարբառի, լեզվամտածողության, աշխարհընկալման, աշխարհաճանաչման, ինքնադրսևորման և այլնի հետ միասին կազմում է ազգի տվյալ ցեղախումբը բնորոշող հիմնական մեծություններից մեկը։

գ) ԱԶԳԻ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ԿԵՆՍԱՏԱՐԱԾՔ։ Ընդհանրացնող և ամբողջացնող կենսագրավիտացիոն այս «հասցեն» արդեն տվյալ ազգի ծագումնաբանական ձևավորմանը մասնակից, բնապատմականորեն անհրաժեշտ, ազգի ամբողջական կենսատարածքի գրավիտացիոն տարածական բաշխվածության պատկերն է, որն ամրագրված է ազգի ամեն մի անհատի ենթագիտակցական ազգային հիշողության համակարգում։

Ամեն մի ազգի որևէ անհատի տարածական գտնվելիությունը ենթագիտակցական վերլուծական մեխանիզմով անընդհատ հետազոտվում և համեմատվում է կենսատեղեկատվական դաշտի կողմից տրվող գրավիտացիոն բաշխվածության ազդանշաններով կառուցվող և ծագումնաբանական հիշողության մեջ ամրագրված կենսագրավիտացիոն հասցեի պատկերների համընկնելիությամբ։ Պատկերի մասնավոր՝ առավել ևս ամբողջական համընկնելիության դեպքում անհատը իրեն ապահով և ինքնավստահ է զգում։ Այսինքն, տեսակի պահպանման օրենքի տեսանկյունից ըստ էության տեղի է ունենում տարածքային գտնվելիության առումով անհակադիր, հավասարակշռված կենսագործունեության զարգացման վիճակ, որով ապահովվում է տվյալ ազգի և նրան պատկանող անհատի լիարժեք, ամբողջական ու արդյունավետ կենսագործունեությունը։ Ամրագրված և առկա պատկերների անհրաժեշտ համընկնելիությամբ են պայմանավորված նաև ազգի թե անհատական և թե զանգվածային մտածողության ստեղծագործական նախաձեռնողությունը և անընդհատ զարգացման հնարավորությունները, քանզի հակառակ դեպքում ենթագիտակցական մտածողության վերլուծություններին հատկացված էներգիայի մի ստվար մաս օրգանիզմի կողմից կտրամադրվեր տեսակի պահպանման խնդիրներին։

Ազգի, ինչպես նաև անհատի գտնվելու վայրի և ազգային կենսատարածքի անհամապատասխանության դեպքում տեղի է ունենում առկա գրավիտացիոն և ծագումնաբանական հիշողության մեջ ամրագրված կենսագրավիտացիոն պատկերների ոչ համընկնելիություն, որը խթանում է տվյալ տեսակի պաշտպանական ֆունկցիաների ուժեղացում։ Այն դրսևորում է թե անհատի և թե զանգվածի՝ միջավայրի նկատմամբ անվստահության, անապահովվածության, անընդհատ ճնշող անբավարարվածության զգացում։ Խթանվում է բանականության տեսակետից հաճախ անգամ անբացատրելի համարվող, հայրենիքը՝ կենսատարածքը, վերականգնելու, վերադառնալու ձգտումը, որը ըստ էության, տեսակի պահպանման օրենքով անհատի ենթագիտակցությանը պարտադրվող իր ազգային ծագումնաբանական կենսագրավիտացիոն «հասցեի» և իրական գրավիտացիոն «հասցեի» համընկնելիությունը վերահաստատելու խնդիր է, որով կապահովվի թե ազգի և թե անհատի բնականոն, լիարժեք, արդյունավետ և ներդաշնակ զարգացումը։

Աղդ-ցեղ-կենսատարածք հարաբերությունների և փոխազդեցությունների տեսանկյունից փորձենք նաև պատճառահետևանքային տեսանկյունով բացատրելիորեն համակարգել այդ հարաբերությունների որոշ հնարավոր տարբերակները և նրանց համապատասխան ազգերի, ցեղերի և անհատների կեցվածքը, վարքագիծը։

1. ԵՐԲ ԿԱ ԵՐԿՈՒ ՀԱՍՑԵՆԵՐԻ ՀԱՄԸՆԿՆՈՒՄ։ Այդ դեպքում թե անհատը և թե ազգը գտնվում են կայուն հավասարակշռվածության, ներդաշնակ, լրնականոն զարգացման վիճակում, քանի որ թե անհատի օրգանիզմի կողմից անհատապես և թե ազգի կողմից ամբողջականացված ձևով վերարտադրվող ներքին էներգիան ամբողջությամբ, լրիվ արդյունավետությամբ և անարգել բաշխվում է կենսագործունեության, գոյության և հարատևման խնդիրների կատարմանը համապատասխանաբար, ըստ գործունեության ոլորտների համապատասխան և բավարար չափերով։

2. ԵՐԲ ԱՆՀԱՏԸ, ԱԶԳԸ ՄԱՍԱՄԲ ԿԱՄ ԱՄԲՈՂՋՈՎԻՆ ՉԵՆ ԳՏՆՎՈՒՄ ԻՐԵՆՑ ԿԵՆՍԱՏԱՐԱԾՔՈՒՄ։ Անհատը գտնվում է անընդհատ լարվածության, ներքին՝ հոգևոր անբավարարվածության, իր տեղը չգտնելու հոգեբանական վիճակում։ Առաջնային պլան է մղվում հայրենիքի, ազգակիցների նկատմամբ անհաղթահարելի կարոտի հոգեբանական վիճակը, որը բանական և ենթագիտակցական խնդիրների լուծումները հաճախ հանգեցնում է ոչ հաշվարկված, ոչ տրամաբանական, ոչ բանական, այլ ազգակցական լուծումների։ Անընդհատ հետապնդվող և գերակա է դառնում հայրենիք վերադառնալու, հայրենիքը վերգտնելու և հոգեպես խաղաղվելու անասելի ձգտումը։ Վտանգի զգացողությունը կտրուկ փաթանում է տեսակի պահպանության պաշտպանական ֆունկցիաները, աճում է այդ խնդիրների լուծմանը արամադրվող էներգիան։ Անհատը գիտակցորեն և ենթագիտակցորեն, անընդհատ փնտրում է ճանապարհներ, հնարավորություններ և միջոցներ՝ հայրենիք, իրեն անհրաժեշտ կենսատարածք վերադառնալու համար։ Եվ այդ երևույթը, փաստորեն ոչ թե պարզապես անհատի պատմական հիշողության ցանկության մի քմայք է, այլ իր էությամբ իրոք որ անհաղթահարելի բնական՝ ֆիզիկական, կենսաբանական օրինաչափություն։ Այնպես որ, կամա թե ակամա, ըստ ժամանակի, բոլոր հնարավոր և սառը դատողությունների, հաշվարկի տեսանկյունից անգամ անհնարին ուղիներով ի վերջո այդ խնդիրը գտնում է իր միակ հնարավոր լուծումը, այն է՝ անհատը, ազգը վերահաստատվում է իր կենսատարածքում՝ հայրենիքում։

3. ԵՐԲ ԲԱՑԱԿԱՅՈՒՄ Է ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԳՐԱՎԻՏԱՑԻՈՆ ԲԱՇԽՎԱԾՈՒԹՅԱՆ ՊԱՏԿԵՐԸ։ Երբ ինչ-ինչ բնական, ստվարաղանգված աղետի հետևանքով լրիվ ձևափոխվում է որևիցե ցեղի կամ ազգի կենսատարածքի գրավիտացիոն բաշխվածության պատկերը, այդ պարագայում ցեղը կամ ազգը դուրս գալով իրեն արդեն խորթացած տարածքից, մտնում է իր կենսատարածքի անընդհատ որոնման մղձավանջը, փնտրում է այն, որը այլևս չկա։

4. ԵՐԲ ԿԱՐԾՈՒՄ ԵՆ, ԹԵ ԻՐԵՆՔ ԻՐԵՆՑ ԿԵՆՍԱՏԱՐԱԾՔՈՒՄ ԵՆ, ՍԱԿԱՅՆ ԱՅԴՊԵՍ ՉԷ։ Երբ թե անհատը, թե ազգը բանականորեն կարծում է, կամ անգամ վստահ է, թե ինքը գտնվում է իր կենսատարածքում և սակայն իրականում այդպես չէ, այս դեպքում տեղի է ունենում բնական աստիճանական, երբեմն անգամ ինչ-ինչ հանգամանքներում, զանգվածային վերատեղավորում։

5. ԵՐԲ ՑԵՂԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՈՂՋ ԸՆԹԱՑՔԸ ՏԵՂԻ Է ՈՒՆԵՑԵԼ ԱՆԸՆԴՀԱՏ ՇԱՐԺՄԱՆ ՄԵՋ։ Այս դեպքում թե անհատի և թե ցեղի մեջ բացակայում է նրանց յուրահատուկ ցեղային ծագումնաբանական կենսագրավիտացիոն պատկերը։ Առկա է լինում միայն ամենաընդհանուր գծերով երկրագնդի մեծ տարածաշրջանի գրավիտացիոն բաշխվածության պատկերը։ Տրվյալ ցեղը մշտապես կգտնվի քոչվորության վիճակում. Նստակեցության պարտադրանքի պայմաններում ընդհանրական ցեղային շարժունակությունը կտրոհվի իրարից անկախ, ամբողջովին անհատական շարժունակության,

որի հետևանքով տվյալ ցեղը որպես տեսակ այլևս չի լինի։

Նույն սկզբունքներով և կառույցներով են ապահովված կենդանական աշխարհի կենսագործունեությունը, տեսակների պահպանության օրենքը, տեսակների տարածական տեղաբաշխումները, շարժումները և այլն։

Այսպիսով, ակնհայտ է, որ հայրենիք երևույթի գոյությունը ոչ թե պատմական հիշողության, սովորույթի կամ պոտաքին բնակլիմայական հարմարվածության խնդիր է, քանզի այդ ամենը բնապատմական զարգացման ընթացքում մշտապես փոփոխվող երևույթներ են, այլ բավական խորքային, մատերիական անհրաժեշտություն։

ՀԱՅ ԴԱՏԻ ԼՈՒԾՈՒՄԸ ՈՐՊԵՍ ՈՉ ՄԻԱՅՆ ՀԱՅՈՒԹՅԱՆ, ԱՅԼԵՎ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅԱՆ ԲՆԱԿԱՆՈՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆ։ Այժմ քննարկենք Հայ Դատի լուծման անհրաժեշտության խնդիրը Հայաստանի ու հայության, Թուրքիայի և քաղաքակրթության տեսանկյունից։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ՀԱՅՈՒԹՅԱՆ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ։ Ինչ խոսք, հայության համար, որի կեսից ավելին այսօր գտնվում է հայրենիքից դուրս, սփռված է աշխարհով մեկ, որը կորցրել է իր հայրենիքի 9/10-րդ մասը, Հայ Դատի լուծման հարցը ներկայանում է որպես բնական, կենսական անհրաժեշտություն, մշտական և առաջնայնորեն հրատապ խնդիր։ Այդ խնդրի լուծված չլինելը արդեն երկար ժամանակ է ինչ արգելակման է ենթարկել հայության բնականոն, բնապատմական զարգացումը։ Այդպիսի իրավիճակը յրջորեն խոչընդոտում է, որ հայությունը վերագտնի իրեն համապատասխան և ճիշտ տեղը, դերը և նշանակությունը համաշխարհային քաղաքակրթության մեջ։ Այդ պատճառով այսօր հայությունը թերևս ավելի շատ քաղաքակրթություն սպառող է քան արարող։

Գտնվելով հայրենիքից՝ իր ժողովրդի ամբողջական համահավաքությունից դուրս, հայ ստեղծագործող տարրը բնականորեն զրկված է ծագումնաբանորեն իրեն հատուկ լրիվ հզորությամբ և արդյունավետությամբ ստեղծագործելու հնարավորությունից, ինչպես և իր մասով լիովին մասնակից լինելու հոգևոր և նյութական արժեքների ստեղծման ճանապարհով քաղաքակրթության զարգացման, մարդկային հանրության հարատևման գործին։

Հարցի բնագիտական՝ կենսաֆիզիկական, կենսաբանական տեսանկյունից ակնհայտ է նաև, որ հայությունը ուզի թե չուզի, կամա թե ակամա բնության կողմից պարտադրված է այդ հարցը լուծելու, իր վրա վերցրելով խնդրի ողջ ծանրությունը և պատասխանատվությունը։ Եվ եթե քանական մտածողության և հարկադրանքի դրդմամբ հայությունը փորձի անգամ հրաժարվել Հայ Դատից, ապա միևնույն է բնությունն իր կառուցվածքային օրենքներով, ուղղություններով և օրինաչափություններով հայությանը մշտապես մղելու է հայրենիք վերադառնալու խնդրի լուծմանը հետամուտ լինելուն։ Ոչ բնական՝ արհեստական և ոչ մի լուծում թեկուզ և այն պարտադրվի հայությանը ողջ աշխարհի ժողովուրդների և պետությունների ընդհանրական համաձայնությամբ, չեն կարող, ի զորու չեն հակադրվել բնության կողմից կանխորոշված՝ տարածաժամանակի և իր բաղմաձևությամբ ամբողջական մատերիայի հիմնարար օրենքներով և զարգացման օրինաչափություններով պայմանավորված խնդրի բնականոն լուծման ընթացքին։

Սակայն մի բան է յուրաքանչյուր հայ անհատին ուղղված բնության անընդմեջ հարկադրանքը և այլ բան՝ խնդրի լուծումը գործընթացի մեջ դնող ազգային կազմակերպչական համապատասխան կառույց ունենալու խնդիրը։ Նման խնդրի լուծմանն անհրաժեշտ կազմակերպչական հիմնական կառույցը անկախ, ազգային, պահանջատեր պետությունն է, որից մինչև 1990 թ. ՀՀ անկախացումը զուրկ էր հայությունը և բնականորեն ստիպված էր սփյուռքի քաղաքական սուղ հնարավորությունների, այլ առաջադեմ պետությունների և միջազգային կազմակերպությունների միջոցով փորձել դրսևորել Հայ Դատի լուծման այլ ճանապարհներ։

Այսօր իրավիճակն այլ է. կարելի է ասել՝ բավական բարենպաստ։

Նորանկախ Հայաստանը և հայ քաղաքականությունը ունեն 1988 թ. ՀՀ Գերագույն Խորհրդի օրենքը ցեղասպանության մասին, 1990 թ. ՀՀ Անկախության Հռչակագիրը, որով Հայաստանը պետականորեն պարտավորվում է սատար կանգնել Հայ Դատի լուծմանը։ Այնպես որ հայության և հայոց պետականության կողմից այսօր արդեն առկա են խնդրի լուծման առաջին անհրաժեշտ քայլերը և հնարավորությունները։ Դրանք ի վերջո պետք է ապահովեն Հայ Ազգի բնականոն, ներդաշնակ և լիարժեք զարգացման անհրաժեշտ նախապայմաններից մեկի՝ ազգային բնապատմական կենսատարածքում, ամբողջական հայրենիքում, ազգի ապրելու, կենսագործելու և ստեղծագործելու բնական իրավունքը։

ԹՈՒՐՔԻԱՅԻ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ։ Հենվելով կենսատեղեկատվական դաշտով պայմանավորված, դրանով կարգավորվող բնության օրենքներին և դրանցից հևտևող օրինաչափություններին, կարելի է վստահ կանխորոշել, որ Թուրքիայի կողմից պետականորեն ծրագրավորված և իրագործված ցեղասպանության միջոցով հայության բնաջնջման և նրա կենսատարածքի զավթման դիվային գործողությունը ի վերջո դառնալու է իր իսկ Թուրքիայի բնական ինքնաոչնչացման հիմնական պատճառը։ Քանզի անկախ Հայ Դատի պահանջատիրությունից, միևնույն է, Թուրքիան, շարունակելով զավթած պահել Արևմտյան Հայաստանի տարածքը, գտնվելով կենսագրավիչ ացիոն և իրական «հատցեների» անհամապատասխանության վիճակում, ներքին էներգիայի մշտապես ոչ բնականոն բաշխվածության, ինչպես նաև ինֆորմացիոն կառուցվածքի, տարածքից բնական օտարման պատճառներով, ինքն իրեն դատապարտել է իր՝ որպես տետական կայացման և առաջընթաց զարգացման բնական արգելակման։ Հիմնականում այդ պատճառով նա այսօր կա և կմնա որպես քաղաքակրթության հետնամնացները բախող երկիր, գրեթե բոլոր հարցերում չինելով անմխված և մերժված՝ քաղաքակիրթ պետությունների և ժողովուրդների կողմից։ Լավագույն դեպքում նա առժամանակ կծառայի որոշ քաղաքական ուժերի՝ որպես բութ գործիք։ Այնպես որ Թուրքիայի հետագայում ևս գտնվելը կենսագրավիտացիոն ոչ իր հասցեում, սեփական զարգացման ինքնարգելակվածության և համաշխարհային քաղաքակրթության անընդհատ զարգացման պայմաններում, պատճառահետևանքային առումով բնական և լուրջ հիմք կդառնա նրա ինքնաքայքայման, ինքնատրոհման և ինքնաոչնչացման համար։

Այսպիսով, Հայ Դատի լուծման խնդրում Թուրքիան ինքը ևս պետք է կայացնի իր որոշումը՝ գնալ ընդդեմ բնության օրենքների և ինքն իրեն դատապարտել ոչնչացման և կամ վերականգնել իրերի բնական վիճակը և հնարավորություն տալով մասնակից դառնալու համամարդկային բնապատմական զարգացմանը, փորձել դառնալու քաղաքակրթության որոշակի տարր։

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՀԱՆՐՈՒԹՅԱՆ՝ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ։ Համամարդկային հոգևոր արժեքների, միջպետական, միջազգային կենսագործունեության, համակեցության և համագործակցության նորմերի, մարդու՝ անհատի, ցեղերի, ժողովուրդների, փորձի և սխալի մեթոդով գտնըված ճշմարտությունները մշտապես հստակեցվել, վերաիմաստավորվել, գիտականորեն վերլուծվել և խմբագրվել են քաղաքակրթության զարգացման տվյալ ժամանակահատվածին համապատասխան, հոգևոր, գիտական և գիտաքաղաքական սկզբունքներով ու մոտեցումներով։ Եվ պատահական չէ, որ այսօրվա հիմնարար, տեխնիկական, հասարակական գիտությունների տեխնոլոգիաների և մարդկային ապրելաձևի ներկայիս պայմանների և հնարավորությունների, ինչպես և աշխարհն ամբողջականորեն ընդգրկող բազմաձև և բազմաբնույթ տեղեկատվական հզոր ցանցի և նրա հնարավորությունների առկայության պայմաններում հստակորեն ընդգծվում է մարդկային հանրության, համակեցության առաջնային խնդիրները ևս հիմնարար և կի-

բառական գիտական հաշվարկների ու համապատասխան տեսությունների միջոցով լուծելու անհրաժեշտությունը։

Ելնելով կենսատեղեկատվական դաշտի էության, կառուցվածքի, բնութագրի ֆիզիկական, կենսաֆիզիկական, կենսաբանական օրենքներից, հիմնարար սկզբունքներից և օրինաչափություններից, անհրաժեշտ կլիներ ենթադրել, որ կենսատեղեկատվական դաշտը իր հիմնարար տեղն ու դերն ունի ոչ միայն անհատների, ցեղերի, ժողովուրդների և ազգերի առանձնացված կառուցվածքային օրինաչափություններում, նրանց կենսագործունեության և զարգացման խնդիրներում, այլև առհասարակ մարդկային հանրության և նրա ներքին փոխհարաբերությունների ձևավորման, և զարգացման, կենսագործունեության, քաղաքակրթության բնապատմական զարգացման հիմնական մեխանիզմներից մեկն է։

Կենսագրավիտացիոն հատցեի առկայության, դրանով պայմանավորված մարդկային հանրության բաշխվածության ամրագրվածության և դրանով կարգավորվող հասարակական համակեցության սկզբունքների ու օրենքների տեսանկյունից Հայ Դատը, ինչպես նաև նմանատիպ այլ խնդիրներ, դարում են միայն տվյալ ազգի՝ մեր դեպքում հայության և հայոց պետականության մենաշնորհ խնդիրը վիճելուց։ Աշխարհի ընդհանրական բնականոն, անհակադիր համընթաց կենսագործունեության, բնական հավասարակշռվածության զարգացման, քաղաքակրթության հարատևման կենսաանհրաժեշտության տեսակետից խիստ կարևորվում է ամեն ազգի, ինչպես և ազգային ամեն մի անհատի իր ազգային ծագումնաբանական և իրական գտնվելիության «հասցեների» համընկնելիության խնդիրը։ Դրա լուծումը կապահովի կենսաէներգիայի բնական բաշխվածությունը և չի կաշկանդի ինչպես անհատին, այնպես էլ ազգին՝ իր ֆիզիկական, հոգևոր և մտային ծագումնաբանական ներունակությանը համապատասխան գործունեության և ինքնազարգացման ասպարեզում։ Անհատի համար կապահովվեն ինքնադրսևորման, հասարակության մեջ իրեն համապատասխան տեղը, դերը և նշանակությունը գտնելու, ինչպես և անձնական գոյատևման՝ ընթացքում ինքնապատակայնությունը հաղթահարելու և նպատակայնությունը վերականգնելու հնարավորությունները։ Իսկ տվյալ ազգի համար կստեղծվի հնարավորություն՝ ազգային ծագումնաբանական ներունակ ժառանգության կարելիությունների սահմաններում իր ստեղծած հոգևոր, մտավոր և նյութական արժեքների միջոցով համաշխարհային քաղաքակրթության բնապատմական զարգացման մեջ իր մասն ունենալու և այդ կերպ լուծելու իր ազգային հարատևման բնական խնդիրը։

Այդ կերպ երկրի վրա ազգերի երկու՝ ծագումնաբանական և իրական «հասցեների» համընկնելիությամբ կառուցված բնականոն բաշխվածության պայմաններում միայն հնարավոր կլինի թևակոխել աշխարհի խաղաղ դոյակցության, անհակադիր համագործակցության դարաշրջան։ Մրցակցության պայքարը կվերաիմաստավորվի, ամենափոքր գործողության նկզբունքով կառավարվող գոյապայքարի ինքնակործան, մշտալուտ աղետի սպառնալիքով հղի դարաշրջանից անցում կկատարվի դեպի աշխարհի քաղաքակիրթ, նպատակամետ զարգացում, որ ամեն մի ազգ, ամեն մի ժողովուրդ, իր հոգևոր, մտավոր և նյութական արժեքների ստեղծման ճանապարհով կձգտի առաջատար տեղ ունենալ քաղաքակրթության հարատև զարգացման գործընթացում։

ЕСТЕСТВЕННАЯ ЖИЗНЕННАЯ НЕОБХОДИМОСТЬ РЕШЕНИЯ АРМЯНАМИ АРМЯНСКОГО ВОПРОСА

С. Р. ШАХАЗИЗЯН

Резюме

В результате дьявольского плана истребления армян путем геноцида и захвата их жизненного пространства, запрограммированного Турцией на государственном уровне, было уничтожено 1,5 миллиона армян, опустошена почти вся Западная Армения, депортирована спасшаяся часть нации. Однако все поколения рассеявшихся по всему свету армян постоянно испытывают ностальгию по Родине, непреодолимое стремление вернуться.

Предполагается, что всем биологическим видам животного мира и человеческого сообщества параллельно их возникновению и формированию свойствен некий естественный механизм генетического закрепления, «адресования» определенного пространственного распределения и местонахождения.

Опираясь на сущность, структурные, а также биофизические, биологические, общественные проявления биоинформационного поля и на обусловленные и регулируемые ими явления и законы, можно заключить, что существование явления Родина есть вопрос не просто исторической памяти, традиций или природно-климатической приспособленности (все это—явления, постоянно меняющиеся в процессе эволюционного развития), а структурно-генетическая, глубинная, материальная, биофизическая необходимость для нации, индивида.